

կան լանդտագները: Բայց այդ երկու ընտրութիւններէ բնաւորութիւնը նոյնը կը մնայ, այսինքն լայնատալի մէջ «Bismarck sans phrase» (Բիսմարկ առանց դատողութեան) անունով մեծամասնութիւն չի կազմել և հակակառավարական տարրը չի իրանց քանակութեամբ և թէ յատկութեամբ, այլ ընդհակառակը աւելի զօրեղ կը լինի:

Մանր կառավարութիւնները, որոնք ընտանաբար պարտիկութիւններ են, առմեն բան տեսնում են, որպէս զի իշխան Բիսմարկի ջանքերը այդպիսի հետեանք ունենան: Սրինակ բավարական թագաւորը հրամայեց բոլոր աստիճանների պաշտօնական անձանցը չը միջամտել ընտրութիւններին, որ և է ճանապարհով չազդել ընտրողների վրա և ոչ ոքի թոյլ չը տալ այդպիսի ազդեցութիւն դրծել: Սակսոնական կառավարութիւնը ոչ թէ միայն չէ արգելում մասնաւոր անձանց վարչական ճանապարհով արտաքսված բանւորների ընտանիքներին օգնութիւն հասցնել, նրանց դատաստանի չէ ենթարկում, այլ ընդհակառակը պաշտօնական և կիսապաշտօնական լրագիրների միջոցով հրաւիրում է հասարակութեանը օգնել այդպիսի ընտանիքներին, իսկ ինքը կառավարութիւնը օժանդակութիւն է տալիս իւրաքանչիւր կնոջը օրական 1 մարկ, իսկ երեխային 30—40 պֆենիգ: Ի հարկէ այդ օգնութիւնը անշուշտ է, համեմատելով այն բարիքների հետ, որ խոստանում է իշխան Բիսմարկի բանւորներին ապահովելու օրինադրելը, բայց հարկաւոր ժամանակ փոքր օգնութիւնն էլ մեծ նշանակութիւն ունի: Բիսմարկի քաղաքականութեան նպատակն է ապագայում վարձարել վերաւորված բանւորներին, իսկ ներկայումս առողջներին հալածում է և անպատուում: Իսկ փոքր թագաւորները, իրանք էլ անպատուած լինելով, պաշտպանում են խեղճ բանւորներին և նրանց մէջ բարեկամութիւն է հաստատվում և ատելութիւն դեպի ընդհանուր թշնամին: Եւ այդ համերաշխութիւնը կայանում է ոչ թէ միայն բանւորների հետ, այլ նա անցնում է և զօրքերի կարգը, որոնց մէջ անբաւականների թիւը հետզհետէ շատանում է: Կուք կը հարցնէք, թէ այդ ինչպէս է պատահում, քանի որ զօրքերը գերմանական կայսերութեան ամենասիրելի առարկան են կազմում, քանի որ նրանց համար զոհվում են ուղղաթիւնութեան շահերը: Կերպարները հետեւեալներն են: Զինուորները շատ լաւ են պահվում, բայց այն խիստ դիւցիպիւնան, որին նրանք են թարկված են, անտանելի է ոչ պրուսացի զինուորներին: Իսկ ոչ-պրուսացի օֆիցերներին համար, չը նայելով մեծ ուժ չկան և անպահանջ յարգանքին, փակված է զինուորական ընդդրձակ ապապիզը: Նրանք կարող են համակ մայորի կամ դէնդապետի օգնականի տասնիմանի, իսկ աւելի բարձր աստիճանները տուած են և տըրվում են միայն պրուսացի օֆիցերներին: Բայց այդ հայրենիքի մէջ ապրելու անկարելութիւնը շատ վատ է ներգործում թէ օֆիցերներին վրա և թէ հասարակ զինուորների վրա: Իսկ հայրենիքի մէջ նրանց թոյլ չեն տալիս ապրել զօրքերի ընդհանուր ոգին պահպանելու համար, այսինքն իսկպէս այն պատճառով, որ կառավարութիւնը շատ չէ հաւատում ոչ-պրուսացի օֆիցերներին: Բացի այդ պրուսական օֆիցերները ծառայում են այլ գերմանական զօնաւորների մէջ, իսկ գերմանացի այլ օֆիցերները պրուսական զօնաւորների մէջ:

յանձնված է պրուսացի օֆիցերներին և ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, որովհետեւ ոչ պրուսացի օֆիցերները գնդապետի օգնականի տասնիմանից աւելի հետ չեն գնում: Ճշմարիտ է, պրուսական զօրքերը թէ իրանց քանակութեամբ և թէ յատկութեամբ գերազանցում են գերմանական միւս փոքր պետութիւնների զօրքերին, իսկ պրուսացի հրամանատարները մեծ նշանակութիւն ունեն: Անհատական փորձը ապացուցում է, որ կասկածանքը անհաւատարմութիւն է ստեղծում և այդ պատճառով գերմանական այժմեան զօրքերը այլ ևս նրանք չեն, որոնք ջարդում էին աւստրիացիներին Սադովայի մօտ և Ֆրանսիացիներին Վեհանի և Կրալլոտայի մօտ: Կուքէ գերմանական զօրքերը գերազանցում են եւրօպական միւս պետութիւնների զօրքերին, բայց նրանք կորցրել են իրանց նախկին յատկութիւնները. սա մի իրողութիւն է, որ ժամանակով կարող է նշանակուի հետեւեալներն ունենալ: Ահհետք չեն մնում և այնպիսի անցքեր, որ նորերումն պատահել են Բրաունշվէյգի մէջ: Ենթադրուի իր աստիճաններից մէկի ստանալու օրը տօնելու ժամանակ մի ճաշ տուել ի պատիւ Բրաունշվէյգի օֆիցերներին և հրաւիրել նրանց, որոնք մնում էին Բրաունշվէյգի մէջ, իսկ պրուսական օֆիցերներին և նրանց թիւում հրամանատար գեներալ Ֆոն-Շտէյնին նա չը հրաւիրել: Կենտրոն չափազանց նեղացաւ, դուքսի վարժուքը մի ցոյց համարելով Պրուսիայի դէմ: Նա խոյն հեռադրով Բերլինից հրահանգ է խնդրում, թէ այդ դէպքում նա ինչպէս պետք է վարվի: Նրան պատասխանում են. «Դուք գեներալ էք և ինքնիւր պետք է իմանաք ձեր անելիքը»: Կենտրոն Ֆոն-Շտէյնը հրամայեց զօրքերին հաւաքվելու իշխանի առջև: Տէնց այն լուպէին, երբ սկսվեցաւ դուքսի տան ճաշը և իսկոյն զօրախաղ նշանակեց: Այդպիսով դուքսի զինուորական հիւրերը ստիպվեցան հեռանալ դուքսից և գնալ իրանց պաշտօնը կատարել: Այդ վարմունքի համար գեներալը գովեստի արժանացաւ:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Բաղէշ, յունիսի 15

Օրերը կը սլանան, տարիները կանցնեն և հայ ժողովրդեան կացութիւնը փոփոխութիւն մը չը կրել երբեք. երկու երեք տարի է Ասիոյ հայը աչքերը Վասփուրի փոխընդունելու քաղաքականութեանը կը սպասէ և սակայն զեղեցիկ խոստանաց ծայրերէն դատ դուռնից, քործաղուծիւն չը տեսաւ: Բնակիչը (commisaire) բարենորոգմանց ստա առաքեալներ եղան. հայութիւնը դիմացներ միայն տեսաւ. բարենորոգիչներու երես երեքը լուրջութեամբ կանցնեն եւ հոս նոցա ապիկար գործունէութիւնը, որը կառավարութեան լարենորոգմանց մէկ ած կամքը մնում պաշտօնական միայն եղան:

Վերջին երկու երեք տարիներու ընթացքը տեղացի հայութեան կախման կէտն էր միջոց մ'եղաւ, և Պերլինի մի յօդուածը, կարծես, խայծ մ'ամբարեւոյ. հինգհարիւրամեայ թրքական չարութեանց կծուութիւնը, որ թիւեցուցած է հայութիւնը ու միջոցը երկու երեք տարի է, այն, պարզապէս հայը շարունակ բարենորոգմանց կը ծայրէ, Թիւրքիոյ բարեմիտ զինուորութեանց հանդիսին կը սպասէ և սակայն ի դուռնի կը կարծէ հայը որ օճը չապիկ հետ ընտելութիւնն ալ կը փոխէ, բայց իրողութիւնը խորագրութիւնը օրօք մ'եղաւ: հայուն տղի մը նման օրօքով երկու—երեք տարի յուսոյ և յուսահատութեան մէջ, հաստատ հաւատք ունենալով որ թիւրքը միշտ թիւրք է, և մահմանական բարենորոգում յափշտակուած գլուխներու երեսկայական պարզ թուքը մ'ուստիւն Եփոստիմ

ձեռնարկութեանց դիմելու, վերջին տարիներու անցքերը այնպիսի հասարակ տեղիք մ'են ուր անժխտելի փաստեր պահուած կան ստեղծուած համար խօսքերու: Ո՛հ, կարելի է ինձ միթէ թուել հոս մի ըստ միջոց բոլոր այն կարեւոր դէպքերը գոնէ, որոց ստեղծութիւնը ցաւալի չարժանիք մ'է հայոց համար թրքական բարենորոգմանց զաղափարը խողաւ վանելու իրենց զլխէն: Թիւրքը միշտ թիւր գաղափարներ կը տածէ հայերու մասին և թիւր ու ծեղածոյ միջոցներով կը կռուի նրա հետ:

Արդարութիւն չը կայ թիւրք իշխանութեան չըջանի մէջ, անիրաւութիւնը այն սահմանագիծն է որ թիւրք կառավարութեան չըջանը կը պատէ, պաշտօնապէս զլխովին հակառակ են արդարութեան, օրէնք, օրինադրք մեռած տառեր են. կառավարութեան գործունէութեան չարժանիքը մոլորանշուրթն ու կաշառքն է. դատեր, դատաստանները, ամեն ինչ դուրանի ու ոսկոյզ զուտ թիւրքութիւններ են: Թող առաջնորդ ու տեղացին, թող աստիկ ու գիտունը, բողոքներ, արդարութիւնը այս երկրի անդարձ աքսորաւն է. զեղծում, զեղծում, ամենուրեք զեղծում, զեղծում որով ստեղծուած է այս երկիր. զեղծում, թէպէտ բարենորոգմանց պաշտօնապէս զիեռաչըջիկ ինչ մը խաղան այս երկրի մէջ:

Բարենորոգմանց պաշտօնապէս ըսեմ արդեօք բարենորոգմանց խաղաձողիկ իրենց ձայն ու համբաւ իրենց գործերէն մեծ եղաւ. իրենց բացակայութիւնը աւելի շահաւոր էր քան ներկայութիւնը. տեղական վարչադ խաղաձողիկ մեծ ոյժ գտաւ նոցա թուրքութեան մէջ յառաջ տանելու իր շարժիւթը, դիմելով որ նոքա և ոչ մի իրական ճիշդագիտութիւն ունին ճշելու իրենց յոյժ ընթացքը:

Այսօր լեռները ամեն ժամանակ աւելի աչսօր պահանջաւ կը լինին անլուր օճիւրներու երբ և ո՛ր ուր թագաւորն եր առիթ կուենան հոս և սուր քործածելու իրենց ծակամուտներու մէջ վերցնելու իսկոճ հայու մը կեանք. երբ լեռնորդ թագաւորներ ամեն ժամանակ աւելի աչսօր կը վրտան իրենց որջերու մէջ, Բարենորոգմունք կը յետաձգուին ու կը խափանուին, չարութիւնը ու աւազակութիւնը կը կազմակերպին ու կը յառաջադրին:

Խօսքերէս չը հետեւիր ըսել թէ տարբեր ու ձորերու մէջ միայն գողութիւն ու աւազակութիւն մուտ գտած են, ոչ, յափշտակութեան ու անիրաւութեան սահմանը այնչափ նեղ չէ. ինչ որ կը լինի բայցօթեայ տեղ մը, նոյնը կը լինի և զիւրի ու քաղաքի մը շուրջ, նոյնը կը լինի և կառավարութեան խոր անկիւնը, հոս ուր իրաւունքը իր վերջին ապաստանարանը պետք էր գտնել: Ինչ կուզեն թող ըսեն ուրիշներ, ես կըրեսեմ որ այս վերջին մի քանի տարիներու մէջ եղած ամեն ինչ ձե են, ամեն ինչ երեւոյթ ու ցիւրք. այս վերջին տարիներու թիւրք գործաւնութիւնը թիւրք կառավարութեան զէջ կատակն է, որոց առօրեայ եղած է հայութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մասիսի մէջ կարգում ենք, չենուէի Ասորացի գեր. Կիւնիսիոս Պրնամ արքայական պատրիարքի նամակ մը գրած էր առ ս. պատրիարքն, ինդրելով որ ետ աւանտ իր հրաժարականն և հաճի դարձաւ չարունակել պատրիարքական պաշտօնը:—

«Մասիս» հայորդում է հետեւեալը: «Բ. Կրնէն ազգ. պատրիարքարան զրկված գիր մը ծանուցանելով թէ ամեն իրիմեան սրբազանի և գեր. Կարիգին վարդապետի Ամն Յնարը զէջ հետեւեալ պատճառ կրնայ լինել, կը պահանջէ որ այս երկու եկեղեցականները Կ. Պօլիս կանչվին: Ազգ. պատրիարքարանը ազգ. մասին իր ունեցած զիտուութիւնները Բ. Կրան ուղղորդութեան ներկայեց:»

«Գոլոթե» լրագրին Կ. Պօլիս գրում են որ չէլիս իրադրութիւնը Կ. Պօլիս գալուն պէս մեծ պատուով ընդունվեցաւ: Թիւրք կառավարութեանց փոխանակ այդ անպատիւն պատճառը, որ այդքան վնաս տուեց Հայաստանին, թիւրք միջնորդները ներկայանում էին նրան և նրա ձեռքն էին համարում, որովհետեւ նա չէլիս է, այսինքն հոգեւոր անձնաւորութիւն Կրանից յետոյ ինչ յոյս կարելի է դնել: Թիւրքիայի վրա հայոց խնդրի լուծելու վերաբերութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յուլիսի: Պետական բանկի 50% տոմսը առաջին չըջանի արժէ 96 ռ., երկրորդ 94 ռ. 62 կ., երրորդ 94 ռ. 75 1/2 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսը կը արժէ 225 ռ. 25., երկրորդ 223 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը արժէ 91 ռ. 62 1/2 կ., երկրորդ 91 ռ. 62 1/2 կ., երրորդ 91 ռ. 75 1/2 կ., ոսկի 7 ռ. 80 կ.: Ռուսաց 1 լուր 1 օնցօնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ռ. չաւրդի վրա արժէ 219 մարկ 75 պֆ.: Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը ամուր է:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԳԻՒՂԱՐԻ Մ. Բ. Աւելի լաւ չէր լինի էթէ Զարիցինից ուղարկված փողերը նուիրատուները նուիրելէն յօդուած դարձողի, քան թէ նոր եկեղեցի կառուցանելու: Երբ կը հասկանան հայերը Գրիստոսի այն խօսքը, թէ «Իրեք երեքը ձեզայից հաւաքված կը լինէր, այնտեղ ես էլ ձեր մէջ կը լինեմ»: Աղօթելու համար կարելի է ամեն տեղ հաւաքվել, հարկաւոր չէ դրա համար առանձին օհարին փողեր ծախսել մի գիւղի մէջ մի մեծ եկեղեցի կառուցանելու համար: Եկեղեցին կարող է անդաւորվել նոյն իսկ դպրոցի դահլիճում: Երբ կը հասկանան հայերը որ կարելի է իւրաքանչիւր գիւղական ուսումնարանի սենեակներից միմի մէջ տեղաւորել եկեղեցին: Եթէ չէք կամենում հետեւել գերմանացիների և ամերիկացիների օրինակին, որոնց դպրոցների դահլիճը կիրակի օրերը եկեղեցի է դառնում, գոնէ նայեցէք ձեր չորս կողմը և կը տեսնէք որ մեր պետական իւրաքանչիւր մի դպրոցի սենեակներից միը նոյն իսկ մեր քաղաքներում, յատկապէս է լինում Եկեղեցուն: Հայերը, ընդհակառակը, գործ են գնում օհարին զօնաւորներ քարաշէն եկեղեցիներ կառուցանելու վրա, նոյն իսկ գիւղական, իսկ ոչինչ փող չէ մնում դպրոցների պահպանելու համար, և դպրոցների շինութիւնները արտօնների նման են: Աւելի լաւ չէր լինի երբեք գոնաւորները գործ դնելու մեծ, չքեղ, ընդարձակ, քարաշէն, հոյակապ յարմար դպրոցներ կառուցանելու վրա, և նոյն իսկ դպրոցի ընդարձակ սենեակներից միը յատկապէս եկեղեցուն, որ մի և նոյն ժամանակ կը ծառայէ ամբողջ գիւղին: Եւ որպէս գիւղական եկեղեցի, ձմեռը քաղաքացի կը լինի և ժողովուրդը կընտանաց միջոցն եկեղեցու գաղափարը ուսումնարանի գաղափարի հետ և կերթալ կիրակի օրերը այնտեղ աղօթելու, որտեղ ամբողջ շաբաթը նրա դասերը ուսում էին առնում: մայրենի լեզուով: Ճշմարիտ, լաւ ստանձնող. որքան միմի ազգայն և նախապաշարված ենք, և որքան միմի խնդրեր միջ միտում ենք ամեն կողմից մեր աղիւսութեամբ և նախապաշարվածութեամբ: Եթէ ընդունենք Գրիստոսի խօսքը, պետք է ընդունենք և այն որ առանձին եկեղեցիներն էլ շատ հարկաւոր չեն, որովհետեւ որտեղ մը խումբ հաւատացեալներ է հաւաքվում, այնտեղ էլ Գրիստոսը նրանց մէջ է, և որքան սրտեղ և եկեղեցի է: Եկեղեցին հաւատացեալների ժողով է, թէկուզ առանց բարաշէն շինութեան, իսկ հայերը կարծում են, որ եկեղեցին անպատճառ մի քարաշէն, հոյակապ շինութիւն պէտք է լինի, թէկուզ իրանք դուրս են հաւատից:

—ՂԱՂԱՐ. Երբ աստու Զեր նամակից մի երկտող լուր հանցիւրը խնդրում ենք որով անգամ մի ինչայեք օրինաւոր թանաք և լուպի գնել. նամակից բան չէր հաղորդվում, որովհետեւ մէկ երեսի վրա գրածը միւս երեսից էր կարդացվում:

—ԹԻՖԼԻՍ. Ա. Մասիսեանց. Չարժէ տղել որովհետեւ ձեր պատասխանին համը հայտնական բառերի մէջն է, իսկ այժմեան ցէնգորը չը բոլորը կը հանէ և ձեր նամակից բան չի մնայ:

—ԻԳԻԻ. Զ. Կուք մեզ կը խղճայի, եթէ իմանայիք որքան մեծ քանակութեամբ անհայտնաւոր ստանում, որոնք սկսվում են այս խոնքերով: Կարծիք հայն միջակված է:

—ԲԱՆՈՒ. Ա. Ինչի չը տպեցինք «Մարդաբնական բնկերութեան» 17-րդ տարեգրքը, թէ իր ժամանակին մի քանի նամակներ այդ մասին ստանանք. — Թող ինքն բնկերութիւնը հասկանայ:

—ԲՈՒԹԱՅԻՍ. Մ. Մեր դամբողը չուտով կը դառնայ մի հայոց երկեսու գաղութ, այնքան շատ են զիջվում նրա մէջ նամակներ դպրոցների, հոգաբարձուների, ուսուցիչների, տեսուչների, հարգաբնութիւնների և այլն սրանց նման բաների մասին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ